

ՏՍՐԵՎԱԼՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Նման նախորդ տարիներուն, այս տարի ևս Յունիսի առաջին երկու կիրակիներուն կատարուեցան Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամավերջի Հանդէսները (Մանկապարտէզի և Երկրորդական բաժնի), երկուքն ալ ժառնգ. Վարժարանի Մանուկեան սրահին մէջ և նախադաշնութեամբ Տեսուչ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի:

Առաջինին յայտագիրը կը բաղկանար արտասանութիւններէ, հայկական պարերէ և կարճ տրամախօսութիւններէ: Բացման խօսքը բրաւ ժրջան վարժուհիներէն Օր. Արփիկ Գահուէճեանը որ, իր պաշտօնակիցներուն նման, ոչինչ խնայած էր Հանդէսի յաջողութեան համար: 10 փոքրիկներ ստացան իրենց վկայականները:

Երկրորդական բաժնի Հանդէսը, ինչպէս յիշուեցաւ Տեղեկագրին մէջ, նուիրուած էր կոմիտաս Վարդապետի մահուան 50ամեակին: Բացման խօսքը բրաւ շրջանաւարտ սաներէն Ուիլիամ Ղաուի, իսկ իր դասընկերուհիներէն երկուքը խօսեցան Հայ երաժշտութեան ուրիշանի կեանքին ու գործին մասին, կարելի յաջողութեամբ: Խմբերգներն ալ, Պր. Սահակ Գալաճեանի ղեկավարութեամբ կատարուած, կը բաղկանային կոմիտասեան երգերէ: Հանդէսին ներկայ էին, բացի Հոգեւոր Հայրերէ, հրաւիրեալներու կոկիկ բաղժութիւն մը:

Գեղարուեստական բաժնի աւարտին, Տեսուչ Սրբազանը հատուածներ կարդաց իր Տարեկան Տեղեկագրէն, որմէ ետք կատարուեցաւ վկայականներու և մրցատկներու բաշխում: Շրջանաւարտներէն — թիւով չորս — մին խնամուած ուղերձ մը կարդաց: «Հրաժեշտի երգ»էն ետք Տեսուչ Սրբազանը բրաւ փակման խօսքը, դրպոցէն ներս փամբուած հայեցի ամուր ոգեկանութեան կառչած մնալու յորդոր ուղղելով ընթացաւարտներուն: Հանդէսը փակուեցաւ Ս. Աթոռոյ մաղթերով:

բայժմար մեր Վարժարանին կը տրամագրեն իրենց թերթերը:

Մեր խորին շնորհակալութեան և որպիսեան սիրոյ սրտագին պարտքը կը հատուցանենք այս առթիւ Զեզի, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր, որ իբրեւ պետը Ս. Յակոբեանց Միաբանութեան, գերազոյս տեսուչն ու հոգատարն էք Ս. Թարգմանչաց երկրորդական Վարժարանին, այս պանծալի տունին, ուրկէ ամէն տարի խումբ խումբ կ'անցնին մեր ազգին զաւակները, լեցուելով ու շնորհազարդուելով մեր ժողովուրդին ու մեր Եկեղեցւոյ սրբազան ոգեկանութեամբ, և որոնք կանչուած են ըլլալու մեր ազգային գոյութեան, մեր ազգային ու հոգեւոր կառոյցին նոր օրերու սպասաւորներն ու մշակները: Շնորհակալ ենք նաև անձնապէս, որ այսպիսի էական գործի մը տնտեսութիւնը քանի մը տասնեակ տարիներէ ի վեր վստահած էք մեր տկար ան-

ձին իբրեւ Տեսուչ այս սրբազան տունին:

Այո՛, Ս. Թարգմանչաց երկր. Վարժարանը իր արդիւնաւորութիւնը մեծապէս կը պարտի Զերդ Սրբազնութեան, վասնզի այդ արդիւնաւորութիւնը ծաղկումն է Զեր հայրական բարձր հոգատարութեան, որ մշտապէս ունեցաւ կրթական այս սուրբ գործին վերա:

Մեր Տեղեկագրին հետ Զեզ կը ներկայացնենք այստեղ 1985-86 դպրոցական տարեշրջանի շրջանաւարտ մեր չորս սաները, որպէսզի անոնց աւարտական վկայականներուն հետ շնորհէք Զեր հայրական օրհնութիւնները, որպէսզի անոնք ըլլան մեր ժողովուրդին բեղմնաւոր զաւակներն ու «մշակներ տառնց ամօթոյ»:

Ներայրական ջերմագին սիրով
խոնարհ աղօթակից

ԿԻՒՐԵՂ ԵՊՍ. ԳԱՅԻԿԵԱՆ

Տեսուչ Ս. Թ. Երկ. Վարժարանի